657
Հ-95

25 SEP 201

ՀԱՅԿՈՌՊ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԵԿՏՈՐ

1936 թ.

ՀՐԱՀԱՆԳ

1936 Թ. ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

ՅՈՒՆԵՍՈՒ-ի հետ վերջնական համաձայնության գալով սահմանված և 1936 թ. շրջանառության ծախսերի հետևյալ նոմենկլատուրան։

1. Ցերկաթուղային և ջրային տրանսպորտ
2. Ավտոմոբիլային տրանսպորտ.
3. Աշխատավարձ
4. Աշխատավարձի վրայեկ
5. Լրացուցիչ ծախս բանուժի վերաբերյալ
6. Շենքի վարձ
7. Շենքերի և գույքի պահպանման ծախսեր
8. Ընթացիկ նորոգում
9. Ամորտիզացիա հիմնական միջոցների
10. Գրասենյակային, փոստային, հեռախոսային և հեռագրական ծախսեր.
11. Գործուղում և ճանապարհածախս.
12. Ապրանքների նախաձեռնում, տեսակավորում և փաթեթում
13. Տարայի կորուստ
14. Ապրանքների կորուստ ճանապարհին
15. Ապրանքների կորուստ պահպանման և վաճառման ժամանակ։
16. Վարչական տոկոսներ։
17. Հատկացում կադրերի պատրաստման ֆոնդին
18. Վճարված կոմիսիա
19. Այլ ծախսեր։

Ծախսերին ավելի ժամանակ հետևելու անհրաժեշտության դեպքում, ծախսերի հաշվառումն ըստ առանձին հոդվածների հանձնարարական քարտերում և գրքերում կարելի է անել։

ՀԱՅԿՈՌՊ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԵԚՏՈՐ
Ա. ՄԵՍՍԱՐՈՍՅԱՆ ՍԱՆ

06 JUN 2013

24,690

657 ԱՎ
Հ-25

ավելի մանրամասն. այսինքն համապատասխան հոդվածը տարրաժանելով ըստ լիտերների. օրինակ—10—ա դրասենյակային և փաստաթղթային ծախսեր, 10—բ հեռագրական. 11—ա գործուղում, 11—բ ճամբարդություն և այլն։

Տարբերվում է ծախսերի բովանդակությունն ըստ յուրաքանչյուր հոդվածի։

ՀՈԴ. 1. ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ, ՋՐԱՅԻՆ ՅԵՎ ՈԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Այս հոդվածներին վերաբերվում են ապրանքների և տարբեր փոխադրավարձը յերկաթուղային, ջրային, փոստային և ոդային տրանսպորտով. ա) գնման կամ մթերման տեղից մինչև պահպանման կամ իրացման տեղը. բ) ապրանքը գնորդին հանձնելիս, յեթե վաճառքի գինը սահմանվում է ֆրանկո նշանակված տեղը, գ) պատրաստի արտադրանքի փոխադրավարձը արտադրական ձեռնարկներին կից նրանց պահպանման տեղից մինչև նրանց իրացման կամ բաշխման տեղը. դ) ապրանքների տեղափոխումը ռմտեսության ներսում (բացի ավտո և դուժ տրանսպորտով փոխադրվելիք ծախսերից)։

Այն տրանսպորտային ծախսերը, վոր մատակարարը վճարում և գնորդի հաշվին ու մտցնում և մատակարարի հաշվի մեջ, վորպես շրջանառության՝ ծախս, արտացոլում են գնորդի հաշվեկշռում իսկ մատակարարի հաշվեկշռում հաշվի յին առնվում—№ 16— «ապրանքներ առաքված այլ քաղաքային վճարողներին» հաշվով կամ գնորդներից—№ 53—հաշվով, նայած թե ապրանքների արժեքը վոր հաշվով են անցկացվել։

Այն տրանսպորտային ծախսերը, վոր մեծավաճառ կազմակերպությունները—շրջմիությունները—վճարում են արդյունաբերության բաղաներից մինչև իրենց պահեստները ապրանքների տեղափոխության համար, յեթե այդ ծախսը կատարվում և ստատիությունների հաշվին (այսինքն ապրանքը վաճառվում և ֆրանկո առաքման կայարան կամ նավահանգիստ)։

Ընդհանրապես յուրաքանչյուր կազմակերպություն, լինի նա մեծավաճառ թե մանրավաճառ, ընդունում և իր շրջանառության ծախսերի հաշվին այն վերջնական ֆրախտը, վոր վճարվում և ապրանքի փոխադրության համար նշանակված ֆրանկո տեղման կայարան կամ նավահանգիստ. անկախ նրանից թե ֆրախտի փաստացի վճարումը կատարվել և մատակարարի կողմից ապրանքն ուղարկելիս, թե գնորդի կողմից ապրանքն ստանալիս։

ՕՐԻՆԱԿ.

ա) Յեթե տրանսպորտիությունն ապրանքը գնում և արդյունաբերության բաղայից, ապա այդ բաղայից մինչև իր պահեստը հասցնելու փոխադրավարձը շրջանառությունն ընդունում և իր շրջանառության ծախսերի հաշվին։

բ) Յեթե գյուղկոոպը ապրանքը գնում և անմիջապես արդյունաբերության բաղայից ապա այդ բաղայից մինչև գյուղկոոպի խանութը հասցնելու փոխադրավարձը արտացոլում և գյուղկոոպի շրջանառության ծախսերում։

գ) Յեթե գյուղկոոպը ապրանքը գնում և հանրապետական մթերության կամ շրջանառության պահեստից, ապա այդ պահեստից մինչև գյուղկոոպի խանութը հասցնելու փոխադրավարձն արտացոլում և գյուղկոոպի շրջանառության ծախսերում, իսկ այն տրանսպորտային ծախսերը, վոր կատարվում են ապրանքն արդյունաբերության բաղայից մինչև մեծավաճառի պահեստը հասցնելը, արտացոլում են մեծավաճառի պահեստի շրջանառության ծախսերում և վոչ գյուղկոոպի (մեծավաճառ պահեստը այդ ծախսը մտցնում և ապրանքի վաճառման արժեքի մեջ, վորը գյուղկոոպի համար հանդիսանում և վորպես ապրանքի գնման արժեք)։

դ) Յեթե սպառկոոպերացիան ապրանքը գնում և արդյունաբերության տեղի առևտրական բաղայից, ապա ապրանքի փոխադրավարձն արդյունաբերության տեղից մինչև արդյունաբերության տեղի բաղան հասցնելը, մտնում և ապրանքի գնման արժեքի մեջ և սպառկոոպերացիայի շրջանառության ծախսերում չի արտացոլում, թեև այդ ծախսը մտցված եվ լինի մատակարարի հաշվի մեջ առանձին հոդվածով։

յե) Յեթե ապրանքը վաճառվում և տրանզիտային կարգով ապա տրանսպորտային ծախսերը արտացոլում են այն կազմակերպության շրջանառության ծախսերում, վորը փաստորեն բատանում և ապրանքը. օրինակ՝ յեթե շրջանառությունը գյուղկոոպին ապրանք և վաճառում, ապա տրանսպորտային ծախսերը արտացոլում են գյուղկոոպի շրջանառության ծախսերում։

Այս հոդվածի ծախսերի մեջ մտնում են տրանսպորտային փաստաթղթերում յեղած բոլոր ծախսերը, ինչպիսիք են տարիֆը, վագոնի տալը, կշռումը, բարձումը և այլն, կապված ապրանքների տեղափոխության հետ, ապրանքներին ուղեկցելու համար։ Հոստուկ նրավիրվածներին վճարվելիք գնալ գալու բոլոր ծախսերը,

վագոնների և նավերի պարապուրդը, յեթե այդ ծախսը հնարավոր չլինի փոխանցել մեղավոր կազմակերպության կամ անձի հաշվին, յերկաթուղային հարկը, վագոնները և նավերը բարձելու ու թափելու ծառայության վճարները և այլն։

Վաճառելու համար նշանակված անասունների և թռչունների ճանապարհին յեղած ժամանակի ընթացքում կերակրելու ծախսը՝ նրանց մորթելիս վերաբերում են վերամշակման հաշվին յեվ վոչ շրջանառության ծախսերի հաշվին։

ՀՈԴ. 2. ԱՎՏՈԳՈՒԺԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ.

Այս հոդվածին վերաբերում են ապրանքների և տարայի փոխադրավարձը ավտոգուժտրանսպորտով— ա) ապրանքների և ժթերումների տեղից մինչև նրանց պահպանման կամ իրացման տեղը հասցնելը։ բ) Մինչև գնորդի ձեռնարկը հասցնելը, կամ մինչև մոտիկ կայարանը, նավահանգիստը հասցնելը գնորդին ուղարկելու համար, յեթե ապրանքը վաճառվում է ֆրանկո գնորդի ձեռնարկը, կամ ֆրանկո առաքման կայարանը։ գ) Պատրաստի արտադրանքի փոխադրավարձը արտադրության ձեռնարկների պահպանման տեղից մինչև իրացման կամ բաշխման տեղը։ դ) Ապրանքների և դատարկ տարայի տեղափոխումը մոտեցության ներքում։

Այս հոդվածին վերաբերում են նույնպես կազմակերպությունների այն ծախսերը, վոր կատարվում են յերկաթուղու և նավահանգիստների պահեստներից ապրանքները սայլերի ու ավտոմեքենաների վրա բարձելու և սայլերի ու ավտոմեքենաների վրայից այդ պահեստները թափելու համար, ժամանակով նաև այդ աշխատանքի համար, հատուկ հրավիրված անձանց վճարը, անկախ նրանից թե այդ ծախսերը մտցված են արդյոք փոխադրման ընդհանուր արժեքի մեջ թե վճարվում են առանձին։

Այս հոդվածին վերաբերում են նույնպես ծառայության արժեքը սեփական այն տրանսպորտի, վորը պահվում է տնտեսավարիկի հիմունքներով և հաշվի է առնվում շահագործման հաշիվներով։ Թեթև տրանսպորտի (շրջագայության ավտոների, կառքերի) պահպանության ծախսը վերաբերում է 11 հոդվածին։ (Գործուղում և հանապարհածախս)։

Գյուղկոոպի ավտոգուժային այն ծախսերը, վորոնց նկատմամբ վորոշ նորմաներով փոխհատուցումն է տրվում (ՌայֆոՍայուզսպիրտ, Զաղոտղերնո), փաստորեն ծախսված գումարներն ամբողջովին հաշվի չեն առնվում գյուղկոոպի շրջանառության ծախսերի 2-րդ հոդվածով (և համապատասխան դեպքերում 1-ին հոդվածով)։ Իսկ այդ ծախսերի ստանալիք փոխհատուցման գումարները մուտք են դրվում գյուղկոոպում ապրանքների հավելման հաշվից։

ՆՅՈՒԹԵՐԸ ՏԵՂ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱԽՍԵՐԸ

Արտադրական ձեռնարկներում հումքը և նյութերը տեղ հասցնելու ծախսերը մտցվում են վերջինների ինքնարժեքի մեջ։ այլ յեթե նյութերն սկզբում ստացվում են վորպես ապրանք և հետագայում հանձնվում են արդյունաբերությանը (փուին, յերշիկանոցին, ճաշարանին և այլն), ապա դրանք հանձնվում են արդյունաբերությանը հետևյալ գներով։

ա) Ծանրաքաշ ապրանքները (ալյուր, աղ, շաքար և այլն) հանձնվում են գնման գնով ապրանքների հաշիվը պահանջագրվում է հանձնված ապրանքների վաճառքի արժեքի գումարով և պարտագրվում է յերկու հաշիվ.—համապատասխան ձեռնարկի արտադրական նյութերի հաշիվը հանձնված ապրանքների գնման արժեքով և տարանցիների հավելման հաշիվը հանձնված ապրանքների վրա կատարված հավելման գումարով։

Միաժամանակ շրջանառության ծախսերից փոխանցվում են համապատասխան առևտրական ձեռնարկի արտադրական նյութերի հաշվին այն ծախսերը, վորոնք ընկնում են հանձնված ապրանքների վրա ըստ հետևյալ հոդվածների։

Հոդ. 1. Յերկաթուղային և ջրային տրանսպորտ.
Հոդ. 2. Ավտոգուժային տրանսպորտ.
Հոդ. 13. Տարայի կորուստ
Հոդ. 14. Ապրանքների կորուստ ճանապարհին։

Այս ծախսերը հաշվի չեն առնվում հանձնված ապրանքների համապատասխան փաստացի կատարված ծախսերի կամ ծախսերի սահմանված նորմաների հետ միասին։

Շրջիրությունների այս ծախսերին ավելացվում են նաև պահեստների աշխատակիցների պահպանման ծախսերն այն չափով, ինչ չափ վոր յուրաքանչյուր շրջապտույտությունը սահմանել և պահեստային աշխատակիցներին վարձատրելու համար՝ վոչ առևտրական ձեռնարկների շրջանառությունից։

Յեթե առանձին դեպքերում սպառողական ընկերությունները (գյուղկոոպ, քաղկոոպ, շրջկոոպ) տեղի կունենան պահեստ-

ներում ապրանքների պահպանության կապակցությամբ մեծ ծախսեր, այդ պահեստներից վոչ առևտրական ձեռնարկներին ապրանք հանձնելիս, ի հաշիվ այդ ձեռնարկների կարելի կլինի փոխանցել պահեստներում ապրանքների պահպանման առնչությամբ կատարված ուղղակի ծախսերի համապատասխան մասը։

բ) Առևտրական ձեռնարկներից վոչ առևտրական ձեռնարկներին կարող են բաց թողնվել առևտրական ձեռնարկի վաճառքի գնով վոչ ծանրաքաշ ապրանքներ (պատահական փոքր զուգարով)։ Դրանք ապրանքների իրացման հաշվով հաշվի չեն առնվում։

Տնտեսական կարիքների համար վոչ մեծ քանակի նյութերի, մանր գույքի և շահագործման համար արտադրության փոխադրման ծախսերն այդ նյութերի ինքնարժեքի մեջ չեն մտցվում, այլ վերաբերում են առևտրական ձեռնարկներում շրջանառության ծախսերին, իսկ արտադրական ձեռնարկներում անմիջապես արտադրական ծախսերին։

ՀՈԴ. 3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Այս հոդվածով հաշվի յին առնվում ցուցակում յեղող բոլոր աշխատակիցների աշխատավարձը, հաշված նաև սեփական պահակներին։

Ցուցակից դուրս յեղող անձանց, այսինքն որավարձով, գործարքային, ժամանակավոր աշխատող բանվորների և ծառայողների աշխատավարձը, վորոնք հրավիրվում են հատկապես նորոգման, ապրանքների տեսակավորման, փաթեթման և նման աշխատանքներ կատարելու համար, վերաբերում է վոչ թե այս հոդվածին, այլ այն հոդվածներին, վորոնցով հաշվի յին առնվում համապատասխան ոպերացիաների հետ կապված այլ ծախսերը. օրինակ՝ ընթացիկ նորոգման համար հրավիրված բանվորների և ծառայողների աշխատավարձը հաշվի յե առնվում 8-րդ հոդվածով, ապրանքների տեսակավորման և փաթեթման համար հրավիրված անձանց աշխատավարձը հաշվի յե առնվում 12-րդ հոդվածով և այլն։

Սակայն յեթե ավյալ կազմակերպությունն իր հիմնական ոպերացիաներն ուժեղացնելու կապակցությամբ (նախատոնային առևտուր, մթերման աշխատանքների խիստ ընդարձակում և այլն) անհրաժեշտ է դառնում իր մշտական աշխատակիցների կազմը ժամանակավորապես ուժեղացնել (ավելացնել խանութների գործակատարների քանակը, մթերման կետի ընդունողներին, կամ կշռողներին և այլն), ապա այդ ժամանակավոր բանվորների և ծառայողների աշխատավարձն անհրաժեշտ է հաշվել 3-րդ հոդվածով։

3-րդ հոդվածին վերաբերում են վճարված և փոխանցված այն բոլոր տեսակի աշխատավարձերը, վորոնք մտնում են պետպլանի կողմից հաստատված աշխատավարձի պլանավորվող ֆոնդի կազմի մեջ, վորպիսիք են.

1. Փաստացի կատարված աշխատանքի ժամյա և արտաժամյա վճարումներն ըստ հիմնական տարիֆային դրույքի (ռոճիկի), գործարքային վճարումներն (ըստ ուղղակի, աճող և պարգևատրային գործարքային, կամ ըստ միջին աշխատավարձի), ակկորդային աշխատանքի վճարումները։

2. Հավելում յերկար տարիների ծառայության համար։

3. Լրացուցիչ վճար վորակավորման համար, վոչ չափավորված աշխատանքի ժամերի բեռնվածության համար և այլն։

4. Կառավարության հատուկ վորոշումներով սահմանված բոլոր պարգևատրումները, մասնավորապես այն պարգևատրումները, վորոնք հաստատվեցին «ԽՍՀՄ ժողկոմխորհի և համկոմկուսի Համ Կ(բ)Կ 1935 թ. սեպտեմբերի 29-ի վորոշման» վճարվում են գյուղկոոպների նախագահներին, սպառողական կոոպերացիայի գյուղում տարվելիք աշխատանքում ապրանքաշրջանառության և կուտակման կիսամյա պլանը կատարելու համար։

Այս նույն հոդվածին վերաբերում են նույնպես այն պարգևատրումները, վորոնք հաստատվեցին ցենտրասոյուզի նախագահության 1935 թ. 4—10-րդ ամսի № 1074, և 1935 թ. 8—12-րդ ամսի № 1809 վորոշումների վճարվում են շրջապատմությունների նախագահներին, գլխավոր հաշվապահներին, ռեվիզորներին և շրջմթերման գրասենյակների դիրեկտորներին ու հաշվապահներին, նաև այն պարգևատրումները, վորոնք հաստատվեցին տարիֆային համաձայնությունների և կոլեկտիվ պայմանագրերի վճարվում են գյուղկոոպների հաշվապահներին հաշվեկշիռները ժամկետից շուտ ներկայացնելու համար։

Ծանոթություն—պարգևատրման ֆոնդի հատկացումները կատարվում են շրջանառության ծախսերի վոչ թե այս հոդվածով, այլ 5-րդ լրացուցիչ ծախս բանուժի վերաբերյալ հոդվածով։

5. Տոկոսային վարձատրությունն (տոկոս շրջանառությունից և այլն) անկախ նրանից՝ արդյոք նրանք վճարվում են, վորպես տարիֆային դրույքի լրացում, թե վորպես աշխատակից-

ների աշխատավարձի հիմնական ձև։

6. Լրացուցիչ վճար արտաժամյա և գիշերային ժամերի աշխատանքի համար։

7. Խոտանի վճարը (վոչ բանվորի սեղքով)։

8. Լրացուցիչ վճարը անձնակազմին արտադրության մեջ ազակերտներին սովորեցնելու համար։

9. Լրացուցիչ վճարը հեռավոր և տենդոտ տեղերում աշխատելու համար։

10. Անչափահասների արտոնյալ ժամերի վճարները։

11. Որենքով սահմանված յերեխաներին կերակրող մայրերի աշխատանքի ընդմիջումների վճարները։

12. Հասարակական և պետական պարտականությունների (խորհրդային, կուսակցական և պրոֆիութենական հանձնարարությունները, յերկրային հավաք, դատարան կանչվելը և այլն) կատարման կապակցությամբ աշխատանքի դուրս չգալու և աշխատանքի ժամերի ընդմիջումների վճարումները, համաձայն աշխատանքի վերաբերյալ որենսգրքի։

13. Արձակուրդային վճարումները։

14. Պլանավորող պարապուրդների վճարումները։

15. Տրամվայով և այլ միջոցներով յերթևեկելու (աշխատանքի տեղը գնալ և գալու) դրամը, կոլեկտիվ պայմանագրերով նախատեսված։

16. Զոդտագործված արձակուրդների փոխհատուցումը։

17. Որենսդրքով նախատեսված լուծարքային նպաստները։

18. Գրականական հոնորարը։

19. Վճարումներն այն աշխատակիցների, վորոնք գործուղվում են ուսանելու մեկ ամսից վոչ ավելի ժամկետով և վորոնք շարունակում են մնալ կազմակերպության աշխատակիցների ցուցակում։

20. Աշակերտների վճարումները։

21. Այն վարձատրությունը վոր վճարվում է կազմակերպության աշխատակիցներին (բայց վոչ կողմնակի անձերին) փոխավճարները դանձելու համար։ (Այն վարձատրությունը, վոր փոխավճարները դանձելու համար վճարվում է կողմնակի անձերին, համաձայն ցենտրոսայուզի նախագահության 1935 թ. ոգոստոսի 9-ի վորոշման, վերաբերում է տվյալ կազմակերպության տրամադրության տակ գտնվող կուլտ-ֆոնդի հաշվին)։

Շրջանառության ծախսերի 3-րդ հոդվածին չեն վերաբերում

աշխատավարձն այն ծառայողների և բանվորների, վորոնց պահպանումը հաշվի յե առնվում շահագործման ծախսերի, այն է հաշվեկշռի №205 «տրանսպորտ եկսպեդիցիոն գործարքների» և №207-«ոժանդակ տնտեսական ձեռնարկների շահագործման» հաշիվներով (ըստ գյուղկոոպների հաշվային պլանի №16-«ձեռնարկների շահագործման» հաշվով)։

ՀՈԴ 4 ՍՊԽԱՏԱՎԱՐՁԻ ՎՐԱՅԵԿ

Այս հոդվածով հաշվի յե առնվում աշխատավարձի վրայեկն այն աշխատակիցների, վորոնց աշխատավարձը վերաբերում է շրջանառության ծախսերի №3 հոդվածին։ Հիմնարկի ցուցակից դուրս հրավիրված անձերի աշխատավարձի վրայեկը վերաբերում է շրջանառության ծախսերի նույն այն հոդվածներին, վորոնց վերաբերում են նաև նրանց աշխատավարձը։

Աշխատավարձի վրայեկին վերաբերում են որենքով սահմանված սոցիալ կատարվելիք հատկացումները և պրոֆիության հետ կոլեկտիվ պայմանագրով սահմանված հատկացումները տեղկոմի պահպանության և տվյալ կազմակերպության աշխատակիցների կուլտ—կենցաղային սպասարկումների համար։

ՀՈԴ. 5 ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐ ԸՍՏ ԲԱՆՈՒԺԻ

Այս հոդվածին վերաբերում են բանուժի այն ծախսերը, վորոնք չեն մտնում պլանավորվող աշխատավարձի ֆոնդի մեջ, դրանք են աշխատակիցներ հրավիրելու և նրանց տարափոխելու հետ կապված (տեղաշարժ, ճանապարհածախս, որապահիկ) ծախսերը, առողջապահության և աշխատանքի պաշտպանության ծախսերը-ոճառ, լրացուցիչ սնունդ, արտհագուստի լվանալ ու կարկատելը, արտհագուստի մաշվածության դուրսգրումը, ճաշերն եժանացնելու համար լրացուցիչ վճարը, առանց վճարի սնունդը, նպաստներ՝ բժշկվելու, թաղման և այլի համար։

Այս նույն հոդվածով հաշվի յե առնվում նաև, համաձայն կառավարության վորոշումների, այն հատկացումները, վոր կատարվում են պարգևատրման ֆոնդը կազմելու համար, այն է վարչա—կառավարչական ապարատի պարգևատրման ֆոնդին հատկացվելիքը համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1935 թ. 17-VI-ի վորոշման (ինչպես աշխատավարձի ֆոնդից կատարվելիք վորոշ տոկոսի հատկացումը, այնպես էլ աշխատավարձի ֆոնդի տնտեսումից գոյացող գումարից՝ 50%-ի չափով կատարվելիք հատկացումը), առաջադիմական պլանի կատարման ու գերակատարման համար ոպերատիվ աշխատողներին սոց-

մրցման և հարվածայնության հիման վրա պարգևատրելու, ինչպես և գյուտարարության, տեխնիկայի կատարելագործման ու ռացիոնալացման առաջարկությունների համար պարգևատրելու ֆոնդին հատկացվելիքը, համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. օգոստոսի 13-ի №13/642 վորոշման։ Ֆոնդը կազմելիս պարտագրվում է «շրջանառության ծախսերի» 5 հոդվածը և պահանջագրվում է «Ֆոնդերի» հաշիվը։

Պարգևատրումը կատարվում է «Ֆոնդերի» հաշվի դեբետով։ Շրջանառության ծախսերի 5 հոդվածով հաշվի յե առնվում պարգևատրման ֆոնդի՝ միմիայն վերը հիշված կառավարական վորոշումներով սահմանված չափով։

ՀՈԴ. 6 ՇԵՆՔԵՐԻ ՎԱՐՁ

Այս հոդվածին վերաբերում են դրասենյակի, խանութների, պահեստների և այլ շենքերի վարձը, վորը վճարվում է ինչպես կողմնակի անձերին այնպես էլ փոխանցվում է շահագործման հաշիվներով տարվող սեփական տնտեսության տնտհաշվաբկային ձեռնարկներին։ Այն դեպքում, յերբ վարձովի շենքի մի մասը տրվում է ուրիշին և ստացվում է դրա համար վարձ, ապա այդ վարձը դրանցվում է ի՝ հաշիվ այս նույն հոդվածի ծախսերի պակասեցման։

ՀՈԴ. 7. ՇԵՆՔԵՐԻ ՅԵՎ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Այս հոդվածով հաշվի յեն առնվում տաքացման, լուսավորության, ջրի մատակարարման, շենքերի մաքրության պահպանման ծախսերը, հակահրդեհային միջոցառումների ծախսերը, կրծողների դեմ պայքարելու ծախսերը, սառցարանների լցնումը և շենքերի պահպանության վերաբերյալ այլ տնտեսական մանր ծախսեր, նույնպես գույքի պահպանման ծախսերը, ծախսեր, վորոնք վճարվում են կողմնակի կազմակերպություններին ու անձերին, և ինքը տնտեսությունը փոխանցում է շահագործման հաշիվներից։

ՀՈԴ. 8 ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ

Այս հոդվածին վերաբերում են ինչպես սեփական, այնպես էլ վարձովի շենքերի և գույքի ընթացիկ նորոգման ծախսերն։ Վարձովի շենքերի այն կապիտալ նորոգումը, վորը վարձով տվողը չի ընդունում ի հաշիվ վարձի, գրանցվում է ի հաշիվ գալիք ժամանակվա ծախսերի և այդտեղից ամեն ամիս փոխանցվում է շրջանառության ծախսերի այս հոդվածին։

Վարձովի գույքի կապիտալ նորոգման փոխանցվելիք ամ-

սական չափը վորոշում է կազմակերպության վարչությունը համաձայն վարձի վերաբերյալ կնքված պայմանագրի ժամկետի և կատարված նորոգման գործունեության ժամկետի։

Այս հոդվածին վերաբերում են մանր գույքի գնման այն ծախսերը, վորոնք հիմնական միջոցների կամ նյութերի հաշվով հաշվի չեն առնվում։

Այս նույն հոդվածով կատարվում են մանր գույքի փչացման և մաշվածության այն դուրս գրումները, վորոնք հաշվի չեն առնվում «մանր գույքի և շահագործման մեջ յեղող արտհագուստի» հաշվով։

Մանր գույք համարվում են՝ այն բոլոր առարկաները, վորոնց մաշվածության ժամկետը լինում է մինչև մեկ տարի, այն բոլոր առարկաները, վորոնց մաշվածության ժամկետը թեև լինում է մեկ տարուց ավելի, բայց նրանց արժեքը 10 ռուբլուց ավելի չէ, նաև ճաշարանային ու խոհանոցային ջարդվող կամ շուտ մաշվող ամանեղենը։ Այդ գույքի փաստացի (նորմալ) մաշվածությունն առևտրա-մթերման ձեռնարկներում, ուր այս առարկաների նկատմամբ սահմանվում է ամսական ինվենտարիզացիա, դուրս են գրվում շրջանառության ծախսերի 8-րդ հոդվածով։

ՀՈԴ. 9 ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Այս հոդվածին վերաբերվում են այն հատկացումները, վոր կատարվում են առևտրա-մթերման գործունեությանն սպասարկող և շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների ամորտիզացիայի համար։

Ամորտիզացիոն ֆոնդին վերաբերող հատկացումները պետք է կատարվեն յուրաքանչյուր ամիս Ցենտրոսայուզի կողմից հաստատված նորմաներով։

Չշահագործվող հիմնական միջոցների համար, ինչպես և վարձովի հիմնական միջոցների համար, ամորտիզացիոն հատկացումներ չեն կատարվում։

ՀՈԴ. 10 ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ, ՓՈՍՏԱՅԻՆ, ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՅԵՎ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Այս հոդվածին վերաբերվում են դրասենյակային պիտույքների, հաշվապահական գրքերի ու բլանկների, լրագրերի, ժուռնալների ու տեղեկատու նյութերի դուրս գրման, հրահանգների ու հաղվեստվությունների տպագրության, մամուլի մեջ տրվող

հայտարարությունների և փոստային, հեռախոսային ու հեռագրական արժեքներն ու ծախսերը

ՀՈԴ. 11 ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՅԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ

Այս հոդվածով հաշվի չեն առնվում գործուղվող աշխատակիցներին վճարվող համբորդության որապահիկի և գիշերելու արժեքը։

Գործուղվողներին վճարվող աշխատավարձը վերաբերում է շրջանառության ծախսերի 3-րդ հոդվածին։

Դիրեկտիվ և խորհրդային հրահանգների առաջադրանքով կատարվող գործուղման ծախսերը (վորոնք սպառկոպերացիայի տվյալ կազմակերպության առևտրա-մթերման գործունեությանն անմիջապես չեն վերաբերում), այս հոդվածին չեն վերաբերում և հաշվի չեն առնվում «այլ կորուստներ և կուտակումների» հաշվով։ Հաշվառման մեջ այս ծախսերն անպայման պետք է առանձնացվեն։

Բուհերի և տեխնիկումների ուսանողներին վճարվելիք որապահիկը և բնակվարձը՝ նրանց արտադրական-գործնական աշխատանքի ընթացքում, այս հոդվածին չեն վերաբերում, այլ վճարվում են այն կազմակերպության կուլտֆոնդի հաշվին, վորտեղ ուսանողներն անց են կացնում գործնական աշխատանքը։

Շրջանառության ծախսերի 11-րդ հոդվածին կարող են վերաբերվել միմիայն գործուղվողին հասանելի ճանապարհածախսը, որապահիկը և գիշերելու վարձը։

Մնացյալ այն բոլոր ծախսերը, վոր գործուղվողը վճարում է իր առհաշիվ դումարներից (որինակ նյութերի գնումը, հեռագրների վճարը և այլն), ավանսային հավելումությունը մշակելիս պետք է վերաբերեն հաշվեկշռի համապատասխան հաշիվներին և շրջանառության ծախսերի համապատասխան հոդվածներին, նայած կատարված ծախսերի բնույթին։

Այս հոդվածին վերաբերում են նաև քաղաքում կատարվող շրջագայության ծախսը (կառքի, տրամվայի, ավտոբուսի) և սեփական թեթև տրանսպորտի (ձի, ավտոմեքենա և այլն) ծախսը, վորը փոխանցվում է տրանսպորտի շահագործման հաշվից։

ՀՈԴ. 12 ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՄՇԱԿՈՒՄ, ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ ՅԵՎ ՓԱԹԱԹՈՒՄ

Այս հոդվածին վերաբերում են ցուցակից դուրս յեղող այն աշխատակիցների աշխատավարձը, վոր հավիրվում են հատկապես հիշյալ աշխատանքները կատարելու համար և այն նյութերի (թուղթ, ծղոտ, յերկաթ, մեխ, թոկ և այլն) արժեքը, վոր գործադրվում են ապրանքները նախամշակելու, տեսակավորելու և փաթաթելու, նույնպես և գնորդներին ապրանք բաց թողնելու համար։ Այս նույն հոդվածին վերաբերվում են գտ մթերքները և հումությունը պահելու ու առաքման համար պիտանի դարձնելու, ինչպիսիք են լվանալը, մաքրելը, տեսակավորելը, չորացնելը, դասավորելը և այլն, հետ կապված ծախսերը։

Նախամշակում ասելով պետք է հասկանալ այնպիսի գործողություն, վորի հետևանքով ապրանքները և մթերքները տեսակափոխության չեն յենթարկվում։ Եթե յեթե նախամշակումն առաջացնում է ապրանքների ու մթերքների տեսակափոխություն (որինակ՝ վարունկի աղաջուր դնելը, ձկնեղենի մարինավատ անելը, յուղի վերահալելը և այլն) ապա այդպիսի աշխատանքի հետ կապված ծախսերը հաշվի չեն առնվում վոչ թե շրջանառության ծախսերով, այլ № 48-«վերամշակում»-ի հաշվով, իսկ գյուղկոոպում №16-«ձեռնարկների շահագործման» հաշվով։

ՀՈԴ. 13 ՏԱՐԱՅԻ ԿՈՐՈՒՍՏ

Այս հոդվածին վերաբերում են տարան մուտք գրելիս՝ նրա գնի պակասեցումն այն չափով, ինչ չափով վոր գնման արժեքից պակաս գնով կարելի կլինի վերադարձնել ժատակարարին կամ հանձնել տարայի նորոգման բաղային և կամ վաճառել կողմնակիներին. տարայի արժեքի պակասեցումը նրա մաշվածության և նրա այլ տեսակի վերածելու հետևանքով, տարայի նորոգման ծախսերը, փոխադրավարձը տարայի նորոգման բազան հասցնելու համար և այլն։ Տարայի իրացումից գոյացած յեկամուտներով պակասեցվում են տարայի կորուստը, այնե, յուրաքանչյուր ամիս մեկ ընդհանուր գումարով իրացման հաշվից փոխանցվում է 13-րդ հոդվածի պահանջին։

Եթե այս հոդվածով գոյանում է կրեդիտային մնացորդ, ապա այդ փոխանցվում է «այլ կորուստներ և կուտակումներ»-ի հաշվին, վորտեղ մնում է մինչև վոր կկուտակվի շրջանառության ծախսերի 13-րդ հոդվածին համապատասխան գումար։

ՀՈԴ. 14 ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Այս հոդվածին վերաբերում են ապրանքների կորուստը փոխադրելու ժամանակ, բայց սահմանված նորմաների սահմաններում։ Սահմանված նորմաներից բարձր ապրանքների կորուստն այս հոդվածով չի գրանցվում, այլ պետք է դանձվի տրանսպորտային կազմակերպություններից բացառությամբ այն դեպքերի,

յերբ վորևե արտակարգ հանգամանքների հետևանքով դատարանի կամ արբիտրաժի վճռի համաձայն, այդ կորուստը վերաբերում է կազմակերպության հաշվին: Տարերային աղետների հետևանքով առաջացած ապրանքների կորուստը ճանապարհին, յեթե այդ չի փոխհատուցված, նույնպես ապրանքների կողոպուտը ճանապարհին, յեթե մեղավորները չեն գտնված, վերաբերում են վոչ թե շրջանառության ծախսերին, այլ «զանազան կորուստներ և կուտակումներ»-ի հաշվին:

ՀՈԴ. 15 ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՅԵՎ ՎԱՃԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Այս հոդվածին վերաբերում են, առաջինը ապրանքների բնական պակասորդն առևտրական ձեռնարկներում պահպանելու ժամանակ, սահմանված նորմաների սահմաններում, յեկրորդ, արձանագրված (հատուկ արձանագրություններով վավերացված) ապրանքային փչացումները, այն է ապրանքների խոտանը և փչացումը պահպանելիս, կորուստները նախամշակելիս և տեսակավորելիս, ավելցուկները, կարտավածները, մաքրումները և այլն:

Ինվենտարիզացիայի ժամանակ բնական պակասորդների սահմանված նորմաներից վեր հայտնաբերված ապրանքների պակասորդները անցեկացնվում՝ առհաշիվ անձերի հաշվին և հաշվի յեն առնվում №59 հաշվով (գյուղկոպում՝ № 9-«դեբիտորներ և կրեդիտորներ»-ի հաշվով): Յեթե դեբետորական պարտքի գումարն ըստ ապրանքների պակասումի համապատասխան դեպքերում, բեղերվացվում է կամ վորպես անհուսալի դուրս է գրվում մնաց ապա բեղերվացումը և դեբետորական գումարի դուրս գրումը կատարվում է ի հաշիվ «զանազան կորուստների»:

Յեվ յեթե բնական պակասորդի սահմանված նորմայից վեր պակասումները, համաձայն դատարանի վճռի, (չհամարելով վատնում կամ հափշտակում) կգրանցվեն վոչ թե ի հաշիվ առհաշիվ անձի, այլ ի հաշիվ կազմակերպության, այդ նույնպես դուրս է գրվում «շրջանառության ծախսերի» 15-րդ հոդվածի հաշվին:

Ապրանքների բնական պակասորդը կարող է հայտնաբերվել միմիայն ինվենտարիզացիայի ժամանակ, վորը վորպես որենք, կատարվում է յեռամսյակում առնվազը մեկ անգամ: Ապրանքների բնական պակասումից առաջացած կորուստները շրջանառության ծախսերում համաչափ արտացոլելու նպատակով, սահմանված նորմայով հաշված պակասումի գումարը յուրաքանչյուր

ամիս գրանցվում է «շրջանառության ծախսերի» 15-րդ հոդվածի հաշվին, պահանջագրելով «բեզերվի» հաշիվը, վորում գոյանում է ապրանքների բնական պակասորդի համար հատուկ բեզերվ:

Ինվենտարիզացիայի ժամանակ հայտնաբերված ապրանքների բնական պակասորդի փաստացի գումարը գրանցվում է վոչ թե շրջանառության ծախսերի, այլ բեզերվի պարտքի հաշվին, պահանջագրելով ապրանքների բնական պակասորդի հաշիվը: Յեթե գոյանա բեզերվի ավելցուկ, ապա այդ գումարը կգրվի է հաշիվ այս նույն հոդվածի կորուստների պակասեցման:

ՀՈԴ. 16 ՎԱՐԿԱՅԻՆ ՏՈԿՈՍՆԵՐ

Այս հոդվածով հաշվի յեն առնվում այն տոկոսները, վորոնք վճարվում են ավանդների, փոխատվությունների և կրեդիտորների հետ ունեցած հաշվարկների համար, այդ թվում նաև տուգանքային տոկոսները՝ վճարված ժամկետներին չփրկագրված հաշիվների համար: Ստացված տոկոսները գրանցվում են «զանազան կորուստների և կուտակումների» հաշվին, առանձնացնելով այն այս հոդվածի անալիտիկ հաշվում:

«Զանազան կորուստների և կուտակումների» հաշվի սալդոն, յուրաքանչյուր ամիս, 16-րդ հոդվածով հաշված գումարի սահմաններում փոխանցվում է շրջանառության ծախսերի հաշվին:

ՀՈԴ. 17 ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՖՈՆԴԻՆ

Այս հաշվով հաշվի յեն առնվում այն հատկացումները, վոր կուլտ-կենցաղային միջոցառումների և կադրերի պատրաստման նպատակով ֆոնդ կազմելու համար, յուրաքանչյուր ամիս կատարում են մանրավաճառի և մթերումների շրջանառությունից:

ՀՈԴՎԱԾ 18 ՎՃԱՐՎԱԾ ԿՈՄԻՍԻԱ

Այս հոդվածին վերաբերում են այն տոկոսային վարձատրությունը, վոր վճարվում է Գ-Տ մթերքներ և հումքի հավաքողներին, կոլխոզային մթերողներին, կոմիսիա պետբանկին ըստ ինկասսո ոպերացիաների, կոմիսիա ըստ առևտրա-միջնորդական ոպերացիաների, կոմիսիա պետբանկին չփրկագրված ապրանքները իրացնելու համար և այլն:

Այն բոլոր տեսակի վարձատրությունները, վորոնք վճարվում են իրեն-կազմակերպության աշխատակիցներին, չպետք է վերաբերեն այս հոդվածին (տես 3-րդ հոդվածի «աշխատավարձ»-ի բացատրությունը):

ՀՈԴ. 19 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Այս հոդվածին վերաբերում են ժողովներ և խորհրդակցու-

թյուններ հրավիրելու ծախսերը, ոտար ապարատով տարվող պահակության ծախսերը (որինակ՝ միլիցիայի հետ կնքած պայմանագրային պահակությունը) վերստուգիչ հանձնաժողովի անդամների վարձատրությունը (յեթե նրանք այդ պաշտոնի համար մշտական աշխատավարձ չեն ստանում), փաստաթղթերի շրջանառության կանոնները խախտելու համար վճարվող տուգանքները, վոչ առևտրական բնույթ կրող պայմանագրերի խախտման տուգանքները (որինակ, շենքի վարձի վերաբերյալ և այլն) նմուշների և նրանց անալիզի, բեկլամների, ցուցափեղկերի պահպանման (պահանջի և առևտրական պրոպագանդայի կազմակերպման) վերաբերիալ ծախսերը, ապրանքներն ոտար պահեստներում պահելու վերաբերյալ ծախսերը, վաճառքի գումարները հավաքելու ծախսերը, հատուկ բաժինների պահպանման ծախսերը (այն դեպքերում, յերբ այդ ծախսերի բնույթն անհայտ ե), և այլն. մնացյալ ծախսերը, վորոնք չեն կարող վերաբերվել նախորդ հոդվածներից մեկն ու մեկին։ Յեթե հատուկ բաժնի ծախսերի բովանդակությունը հայտնի յե (որինակ աշխատավարձ, հեռագրներ տալը և այլն) ապա այդ ծախսերը վերաբերում են շրջանառության ծախսերի համապատասխան հոդվածին։

ՎԱՐՉԱ-ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Վորպես տարբերություն անցյալ տարիների, 1936 թ. հաշվառման և հաշվետվության մեջ հիշյալ ծախսերը բաժանվում են.

ա) Վարչակառավարչական ծախսեր. գրասենյակների և հիմնարկների վարչական ապարատի պահպանման համար (այսպես կոչված վարչական ապարատ 1-ին հերթի համաձայն ԽՍՀՄ ֆին ժողկոմի հրահանգի)։

բ) Վարչա-կառավարչական ծախսեր ձեռնարկների վարչական ապարատի պահպանման համար (այսպես կոչված վարչական ապարատ 2-րդ հերթի, համաձայն ԽՍՀՄ ֆինժողկոմի հրահանգի)։

1-ին հերթի վարչա-կառավարչական ապարատը 1936 թվի համար մնում ե նույն ծավալի և բովանդակության, ինչպես յեվ 1935 թ.։

Վարչա գրասենյակային ապարատի գործուղման ծախսերն իրենց վոչ բովանդակությամբ հանդիսանում են 1-ին հերթի վարչա-կառավարչական ծախսեր, անկախ գործուղման նպատակներից (որինակ՝ ուղեվորություն ապրանք գնելու համար)։

Ձեռնարկությունների վարչա-կառավարչական (2-րդ հերթ) ապարատին վերաբերում են խանութների, պահեստների, բազաների, մթերման կետերի, հացաթխման, ճաշարանների, թեյատների և այլ արտադրական ձեռնարկների վորոշ կարգի աշխատակիցներ և նույնպես գյուղկոոպների վարչությունների ապարատներից վորոշ աշխատակիցներ։

Գյուղկոոպների և շրջկոոպների վարչությունների ապարատի վարչա-կառավարչական անձնակազմին վերաբերում են։

ա) Վարչության նախագահն անկախ նրա կատարելիք աշխատանքից, յեթե սպառողական ունի յերկու խանութից ավելի և այդ խանութներում հինգ վաճառողներից ավելի։ Յեթե բացակայում ե այդ պայմաններից մեկը, այն ե գյուղկոոպ ունի յերկու խանութից վոչ ավել կամ հինգ վաճառողներից վոչ ավել, ապա նախագահը վերաբերում ե վարչա-կառավարչական ապարատին միմիայն այն դեպքում, յեթե նա անմիջականորեն խանութում չի աշխատում։

բ) Հաշվային աշխատողները։

գ) Կրտսեր ծառայակազմը-դռնապան, պահապան, կառապան, ձիապան (շրջագայելու), շոֆերը շրջագայելու մեքենայի։

Բոլոր կազմակերպություններում ձեռնարկների վարչա-կառավարչական ապարատին վերաբերում են։

ա) Խանութների վարիչները, յեթե խանութում մեկ հերթափոխության աշխատում են 5-ից ավելի վաճառողներ, իսկ մեկուկես կամ յերկու հերթափոխությանը 8-ից ավելի. վաճառողների մեջ պետք հաշվել նաև բաժինների վարիչներին։

բ) Բազաների և պահեստների վարիչները, յեթե պահեստում կամ բազայում աշխատում են յերեքից ավելի մարդ (հաշված նաև վարիչին) չհաշվելով պահակներին։

գ) Բազաների և պահեստների բաժանմունքների և սեկցիաների վարիչները, յեթե բաժանմունքում կամ սեկցիայում աշխատում են 4-ից ավելի մարդ, հաշված նաև վարիչին։

դ) Ապրանքագետները, յեթե նրանք ապրանքների տեսակավորումով, ընտրությամբ, ընդունելությամբ և խոտանումով չեն զբաղվում։

յե) Մթերման կետերի վարիչները, յեթե այդ կետերում աշխատում են յերկու մշտական աշխատակիցներից ավելի (հաշված նաև վարիչին) չհաշվելով պահակներին և սեզոնային բանվորներին։

զ) Ճաշարանների, բուֆետների, բիստորանների և թեյարանների վարիչները, յեթե նրանցում աշխատում են յերեք մատուցողից ավելի մեկ հերթում և չորս մատուցողից ավելի-յերկու հերթում։

ե) Փռերի, յեթե [illegible] արտադրական ձեռնարկների և արհեստանոցների վարիչները, յեթե նրանցում աշխատում

ՀԱՅԿ.ՍՍՀ ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ

են 10-ից ավելի մարդ (ներառյալ վարիչը) և յեթե վարիչն անմիջականորեն արտադրության մեջ չի աշխատում։

ը) Այն հաշվային, գրասենյակային և պլանային աշխատակիցները, վորոնք աշխատում են վերը հիշված ձեռնարկներում (անկախ նրանից կան արդյոք այդ ձեռնարկներում վարչա-կառավարչական աշխատակիցներ համաձայն "ա-ե" կետերի, թե վոչ)։

թ) Այն կրտսեր ծառայողները-պահապաններ, դռնապաններ հավաքարարներ, վորոնք աշխատում են վերը հիշված ձեռնարկներում։

Ինչ վերաբերում է առևտրա-մթերային ձեռնարկներում հաշվային, գրասենյակային, և կրտսեր աշխատողների կազմին, ապա պետք է նկատի ունենալ, վոր յեթե այդ ձեռնարկները ունեն յերեքից վոչ ավելի աշխատակիցներ, չհաշված պահակները, ապա այդ ձեռնարկների վոչ մեկ աշխատակից չի պատկանում վարչա-կառավարչական ապարատին։ Ուստի, որինակ, յեթե խանութն ունի յերեք վաճառող (վարիչի հետ միասին) և պահում է պահապաններ, ապա պահապանն այս դեպքում չի պատկանում վարչա-կառավարչական ապարատին։

Ոժանդակ ձեռնարկներում վարչա-կառավարչական ապարատին վերաբերում են այն նույն պաշտոնյաները, վորոնք ցույց են տրված հիմնական ձեռնարկների համապատասխան շարքերում։

Ձեռնարկներում վարչա-կառավարչական ծախսերին վերաբերում են հետևյալ ծախսերը։

Ըստ 3-րդ հոդվածի վարչա-կառավարչական անձնակազմի աշխատողների (վերը ցույց տված բովանդակությամբ) աշխատավարձը։

Ըստ 4-րդ հոդվածի վարչա-կառավարչական ապարատի անձնից աշխատավարձի վրայակը։

Ըստ 5-րդ հոդվածի բանուժի այն լրացուցիչ ծախսերը, վորոնք վերաբերում են վարչա-կառավարչական անձնակազմին։

Ըստ 10-րդ հոդվածի փոստ-հեռախոսային և հեռագրական բոլոր ծախսերը։ Իսկ գրասենյակային ծախսերից վարչա-կառավարչականին վերաբերում են միայն այն ծախսերը, վորոնք կապված են վարչա-կառավարչական ապարատի անձնից աշխատանքների հետ։

Վարչա-կառավարչական ծախսերին, որինակ, չեն վերաբերում խանութներում, ճաշարաններում և այլ ձեռնարկներում գործածվող դրամարկղի ժապավենների ու չեկերի, մուտք ու յելքի որդերների և բլոնդերների արժեքները։ Յեթե տվյալ ձեռնարկում չկա բոլորովին վարչա-կառավարչական անձնակազմ, ապա այդպիսի ձեռնարկի գրասենյակային ծախսերն ընդհանրապես վարչա-կառավարչական ծախսերին չեն վերաբերում։

Ըստ 11-րդ հոդվածի ձեռնարկների բոլոր աշխատակիցների

գործուղումը և ճանապարհածախսը (վոչ միայն վարչա-կառավարչական անձնակազմի անձանց)։

Բացի այդ, ձեռնարկների վարչա-կառավարչական ծախսերին վերաբերում են շրջանառության ծախսերի նամակցատուրայի 6, 7, 8 և 9 հոդվածների ծախսերն այն դեպքում, յերբ այդ ձեռնարկներն ունեն վարչա-կառավարչական անձնակազմի համար առանձնացված գրասենյակ։ Ուստի այն ձեռնարկներում, վորոնք վարչա-կառավարչական անձնակազմ չունեն, այդպիսի ծախսեր տեղի ունենալ չեն կարող։

Իսկ գյուղկոոպների և շրջկոոպների (վոչշրջկոոպմթերությունների) վարչությունների գրասենյակների պահպանման ծախսերը վերաբերում են վարչա-կառավարչական ծախսերին, այն պատճառով, վոր բոլոր գյուղկոոպների և շրջկոոպների վարչությունների ապարատներում կան վարչա-կառավարչական անձնակազմի աշխատողներ։

Այն կազմակերպություններում և ձեռնարկներում վորոնք գործադրում են հաշվային առավելագույն պլանը, վարչա-կառավարչական ծախսերը հաշվի չեն առնվում № 182 հաշվով։

Իսկ այն կազմակերպություններում և ձեռնարկներում, վորոնք հաշվառումը տանում են հաշվային կրճատ պլանով (Ամերիկյան ձևով), վարչա-կառավարչական ծախսերը տանում են «շրջանառության ծախսերի» հաշվով, իսկ անալիտիկ հաշվառման մեջ այդ ծախսերն առանձնացվում են։ Ուստի շրջանառության ծախսերի այն հոդվածները, վորոնց նկատմամբ կարող են լինել վարչա-կառավարչական ծախսեր, դրանց համար բացվում են յերկու առանձին հաշիվներ, մեկը վարչա-կառավարչական ծախսերի հաշվառման համար, մյուսը շրջանառության ծախսերի (վարչա-կառավարչական ծախսերին չվերաբերող) հաշվառման համար ըստ այս հոդվածի։

Գյուղկոոպներում և շրջկոոպներում շրջանառության ծախսերի յուրաքանչյուր հոդվածի համար լինելու յեն յերեք այլանակ։ ա) Ընդհանուր ծախսեր, բ) Առևտրական ծախսեր և գ) Մթերման ծախսեր։

Գյուղկոոպի նախագահի և հաշվապահի այն աշխատավարձը, վոր նրանք ստանում են վորպես հատուկ հավելում մթերման և առևտրական ճյուղերին ապասարկելու համար, պետք է վերաբերեն անմիջականորեն առևտրին, մթերմանը և վոչ առևտրական ձեռնարկներին համապատասխան գումարների չափով։

Նկատի ունենալով այն, վոր գյուղկոոպի և շրջկոոպի նախագահի աշխատավարձն ըստ առևտրի վորոշվում է համապատասխան շրջանառության՝ ներառյալ նաև հասարակական սննդի շրջանառությունը, ուստի նախագահի ստացած հիմնական աշխատավարձի գումարը բաժանվում է առևտրի և հասարակական

ունդի մեջ նրանց շրջանառության համեմատական չափով։ Նախագահի և հաշվապահի աշխատավարձն ըստ մնացած վոչ առևտրական ձեռնարկների վերաբերում է այդ ձեռնարկներին, սակայն շրջապտույտության փայատերերի ընդհանուր ժողովի կողմից սահմանված գումարի չափով։

Այսպիսով գյուղկոոպում նախագահի և հաշվապահի աշխատավարձը և նրանց աշխատավարձի վրայեկը «ընդհանուր ծախսերի» սյունակում ցույց չի տրվում։ Այս սյունակում ցույց է տրվում միայն գոյություն ունեցող նամենկլատուրայի այլ հոդվածների ծախսերը։

Յեթե գյուղկոոպն ունի վոչ առևտրական ձեռնարկներ (փուռ, ճաշարան և այլն), նրա ընդհանուր ծախսերը (բացի նախագահի ու հաշվապահի աշխատավարձից ու վերայեկից) պետք է բաշխվեն (ըստ հոդվածների) առևտրա—մթերման շրջանառության և վոչ առևտրական ձեռնարկների շրջանառության մեջ, գյուղկոոպի ընդհանուր շրջանառության մեջ նրանց ունեցած տեսակարար կշռի՝ համեմատական չափով։ Ապա առևտրա—մթերման շրջանառությանն ընկնող ընդհանուր ծախսերի գումարն ըստ յուրաքանչյուր հոդվածի, բաժանվում է առևտրի և մթերման մեջ այդ նյութերի ուղղակի ծախսերի համեմատական չափով։

Համաձայն ցենտրոսայուզի նախագահության 1936 թ. մարտի 7-ի № 248 վորոշման, փուռը գյուղկոոպի և շրջկոոպի վարչության պահպանման ծախսերի համար, կատարում են հատկացում իրենց շրջանառության 0,75 %-ի չափով, յեթե փուռի հաշվառումը տարվում է գյուղկոոպի և շրջկոոպի վարչության ապարատում և 0,45 տոկոսի չափով, յեթե փուռի հաշվառումը տարվում է իր—փուռ—ապարատում։ Ըստ վորում փուռ գյուղկոոպին ու շրջկոոպին փոխանցվելիք ընդհանուր ծախսի մասը վերը հիշված նորմայից ավելի լինել չի կարող։

Գյուղկոոպի (շրջկոոպի) «ընդհանուր ծախսերի» բաշխման կարգը բացատրվում է հետևյալ որինակով։

Գյուղկոոպի մեկ ամսվա շրջանառությունն ըստ առանձին հյուղերի կազմում է հետևյալ չափով։

Ըստ առևտրի	42.500 ռ.	68,1 տ.
Ըստ մթերման	8700 ռ.	
Ըստ հացաթխման	11600 ռ.	15,4 տ.
Ըստ ճաշարանի	12400 ռ.	16 5 տ.
	75200 ռ. կամ	100 տ.

Ընդհանուր ծախսերը կազմում են 650 ռ. ուղղակի ծախսերն ըստ առևտրի—3620 ռ. և ուղղակի ծախսերն ըստ մթերման—890 ռ.։

Ընդհանուր ծախսերի գումարից փուռն ընկնում է՝

$$\frac{650 \times 15.4}{100} = 100 \text{ ռ. } 10 \text{ կ.},$$

մինչդեռ համաձայն Ցենտրոսայուզի

վորոշման, փուռը կարող է հատկացնել գյուղկոոպի վարչության պահպանման համար իր շրջանառության 0,75 տոկոսից վոչ ավելի, այսինքն՝ տվյալ դեպքում 87 ռ. վոչ ավելի։

Այդ 87 ռուբլուց պետք է դուրս գալ նախագահի և հաշվապահի հացաթխման հաշվից ստացած աշխատավարձը, յենթադրենք 50 ռ., մնացյալ 37 ռ. կազմում է ընդհանուր ծախսերի գումարի

$$\frac{37 \times 100}{650} = 5,7 \text{ տոկ.},$$

ուստի ընդհանուր ծախսերի յուրաքանչյուր հոդվածից պետք է փոխանցել հացաթխման հաշվին 5 7 տոկ.։ Այն դեպքում, յեթե հացաթխմանն ընկնող ընդհանուր ծախսերի մասը՝ հաշված շրջանառության համեմատական չափով, վճարված աշխատավարձի և վրայեկի հետ միասին չի գերազանցի նորմայով (0,75 տ. կամ 45 տ.) հաշված գումարից, ապա ընդհանուր ծախսերի դուրս գրումը կատարվում է շրջանառության համեմատական չափով։

Ընդհանուր ծախսերի ճաշարանին ընկնող փոխանցումը կազմի

$$\frac{650 \times 16.5}{100} = 107 \text{ ռ. } 25 \text{ կ.}$$

Այսպիսի փոխանցումը նույնպես պետք է կատարվի ընդհանուր ծախսերի յուրաքանչյուր հոդվածից։

Ընդհանուր ծախսերի մնացյալ գումարը 650—(37 ռ.+107 ռ.—25 կ.)=505 ռ. 75 կ. պետք է բաժանվի առևտրի և մթերման մեջ այդ ճյուղերի ուղղակի ծախսերի համեմատական չափով։ Դրանց ուղղակի ծախսերը կազմում են 3620+890=4510։

Առևտրի ուղղակի ծախսերի տեսակարար կշիռը կազմում է հիշյալ գումարի 80 տոկոսը, իսկ մթերմանը—20 տ.։ Այս համեմատությամբ ել մնացած ընդհանուր ծախսերը (505 ռ. 75 կ.) պետք է բաժանվեն ըստ առանձին հոդվածների առևտրի և մթերման մեջ։

Գյուղկոոպի ընդհանուր ծախսերի մասը վոչ առևտրական ձեռնարկների հաշվին փոխանցելիս ձեռնարկների շահագործման ջաշիվը պարտագրվում է և շրջանառության ծախսերի հաշիվը պահանջագրվում է։ Գյուղկոոպի առևտրական ծախսերի այն մասը, վորն ընկնում է ինքնուրույն հաշվեկշռի անցած գյուղմագի հաշվին, գյուղմագը վճարում է շրջկոոպմիության կողմից սահմանված վոչ տոկոսի չափով գյուղմագի շրջանառության նկատմամբ, համաձայն Ցենտրոսայուզի դիրեկտիվների։ Այս հատկացումները թե գյուղմագի և թե գյուղկոոպի հաշվեկշիռներում հաշվի յեն առնվում № 23—«Զանազան կորուստներ և կուտակումներ» հաշվով («ներտնտեսային հատկացումներ» հոդվածով)։ Գյուղմագը հատկացման գումարը հանձնում է գյուղկոոպի վարչությանը «ներտնտեսային հաշվարկներ ըստ ընթացիկ գործարքների» հաշվի միջոցով։

Շրջկոոպում և քաղկոոպում ընդհանուր ծախսերի բաժանումը առևտրի, մթերման և վոչ առևտրական ձեռնարկների մեջ կատարվում է նույն հիմունքներով, ինչպես և գյուղկոոպում, սակայն այն տարբերությամբ, որ այս դեպքում «ընդհանուր ծախսեր» այնպիսի ցույց է տրվում և չենթակա է բաժանման նույնպես վարչության նախագահի և հաշվային անձնակազմի աշխատավարձը և աշխատավարձի վրայեկը: Այս առաջ է գալիս նրանից, որ հիշյալ աշխատակիցներից աշխատավարձը սահմանվում է վորպես միասնական աշխատավարձ գործունեության բոլոր ճյուղերի համար:

Հաստատված Ցենտրոսայուզի նախագահության 1935 թ. դեկտեմբերի 8-ի № 1291 վորոշման շրջսպառմիության վարչա—կառավարչական ծախսերը, վորոնք ընկնում են նրա անտհաշվարկային ձեռնարկների վրա, հատուցվում են այդ ձեռնարկների կողմից հոգուտ շրջսպառմիության վարչությանը սահմանված չափով:

Շրջսպառմիության ինքնուրույն հաշվեկշռի անցած մանրավաճառ խանութները շրջսպառմիության վարչության ոգտին հատկացում կատարում են իրենց շրջանառության 0.5 տոկոսի չափով:

Այդ հատկացումները թե խանութների հաշվեկշռում և թե շրջսպառմիության վարչության հաշվեկշռում հաշվի չեն առնվում վորպես «ներտնտեսային հատկացումներ»: Հատկացման գումարը խանութները հանձնում են վարչությանը միջգրասենյակային, ըստ ընթացիկ հաշվարկների հաշվի միջոցով:

Շրջսպառմիության վոչ առևտրական ձեռնարկները, միության վարչա—կառավարչական ծախսերը ծածկելու համար հատկացնում են իրենց շրջանառության 1 տոկոսը: Յեթե ձեռնարկը տարվում է ինքնուրույն հաշվեկշռով, ապա հատկացման գումարով պարտագրվում է «ըստ արտադրության ընդհանուր ծախսերի» հաշիվը և պահանջագրվում է «միջգրասենյակային հաշվարկներ ըստ ընթացիկ գործարքների» հաշիվը:

Յեթե ձեռնարկը հաշվի չի առնվում ընդհանուր հաշվեկշռում, ապա հատկացման գումարով պարտագրվում է «ըստ արտադրության ընդհանուր ծախսերի» հաշիվը և պահանջագրվում է № 182—վարչա—կառավարչական ծախսերի հաշիվը: Շրջսպառմիության վարչա—կառավարչական ծախսերը փոխանցվում են նրա վոչ առևտրական ձեռնարկների հաշվին № 182 հաշվից այնպիսի գումարով, որը չի գերազանցի ձեռնարկներից ստացած հատկացումների գումարին: Սրա համար էլ նախ վորոշվում է շրջսպառմիության վարչա—կառավարչական ընդհանուր ծախսերի գումարի նկատմամբ վոչ առևտրական ձեռնարկներից ստացված հատկացումների գումարի տոկոսը տվյալ ամսում և այդ չափով էլ վարչա—կառավարչական ծախսերից ըստ յուրաքանչյուր հոդվածի կատարում են հանումներ:

Օրինակ՝ շրջսպառմիությունն ունի հաշարան և փուռ: Ծա-

շարանի մեկ ամսվա շրջանառությունը կազմում է 37 հազար ռուբլի, և փուռի շրջանառությունը 29 հազ. ռուբլի: Շրջսպառմիության վարչության պահպանման համար ճաշարանը պետք է հատկացնի 370 ռ. և փուռը 290 ռ. իսկ յերկուսը միասին 660 ռ.: Շրջսպառմիության վարչա—կառավարչական ծախսերը տվյալ ամսում № 182 հաշվով կազմում է 4120 ռ.: Այսպիսով վոչ առևտրական ձեռնարկներից ստացված հատկացման գումարը կազմում է շրջսպառմիության, վարչա—կառավարչական ծախսերի

$$\frac{660 \times 100}{4120} = 16$$ տոկ.: Ուստի վարչա—կառավարչական ծախսերի յուրաքանչյուր հոդվածից հանվում է 16 տոկ. (№ 182 հաշիվը պահանջագրվում է) և փոխանցվում է միջգրասենյակային հաշվարկներ ըստ ընթացիկ գործարքների հաշվին կամ (ըստ արտադրության ընդհանուր ծախսերի հաշիվը պարտագրվում է):

Յեթե շրջսպառմիությունը հացաթխման և հասարակական սննդի գծով գյուղկոոպներին սպասարկելու համար ունի հատուկ աշխատակից (տեսուչ), ապա այդ աշխատակցի պահպանության ծախսը (անկախ նրանից, միությունն ունի արդյոք իր հացաթխումը և հասարակական սնունդը, թե վոչ) շրջսպառմիությունը հաշվի չի առնում № 182 հաշվով, սակայն ըստ առևտրա—մթերման գործունեության վարչա—կառավարչական ծախսերից առանձին:

Վարչա—կառավարչական ծախսերի հաշվեառության մեջ այդ աշխատակիցների պահպանման ծախսերը ցույց են տրվում վորպես հիշյալ ճյուղերի ծախսեր: Նույնպես կորուստների և կուտակումների տախտակում այդ ծախսերը ցույց են տրվում ճյուղերի սյունակներում, անկախ նրանից, շրջսպառմիությունն ունի արդյոք այդ աշխատակիցների պահպանման ծախսերը ֆինանսավորելու համար աղբյուրներ, թե վոչ:

Շրջսպառմիության վարչությունն իր վարչա—կառավարչական ծախսերի գումարի (այն գումարի, վորից դեռևս վոչ առևտրական ձեռնարկներին ընկնող մասը չի հանված) 10 տոկոսը փոխանցում է մթերման գրասենյակի հաշվին: Ըստ վորում շրջսպառմիության հաշվեկշռում № 182 հաշիվը պահանջագրվում է, իսկ մթերման գրասենյակի հաշվեկշռում նույն հաշիվը հավասար գումարով ըստ յուրաքանչյուր հոդվածի պարտագրվում է:

Յեթե շրջսպառմիության մթերման գրասենյակն ունի արտահաշվարկային ձեռնարկներ, սա նույնպես իր վարչա—կառավարչական ծախսերը ծածկելու համար իր ձեռնարկներից ստանում է 1 տոկ. հատկացում: Այդ հատկացման հաշվառման կարգը նույնն է, ինչ վոր վերը՝ շրջսպառմիության վոչ առևտրական ձեռնարկների նկատմամբ ցույց տրվեց:

Մեծաքանակ վաճառք չունեցող շրջսպառմիությունները հատկացումներ ստանում են հանրապետական յերկրային և մար-

34

24.690

գային մեծավաճառ պահեստներից, կամ շրջմիութիւնների միա-
վորումի պահեստներից։ Ցերկու կողմերն էլ այդ հատկացումնե-
րը հաշվի յին առնում № 204 «ներկոոպերատիվ հատկացումնե-
րի» հաշվով։

Ցենտրաապարատի կողմից սահմանված հանրապետական, յերկ-
բային և մարզային միութիւնների նախագահութիւնների վար-
չա—կառավարչական ծախսերի մասի փոխանցումը մթերման մի-
ավորումների և հիշյալ միութիւնների մթերման գրասենյակների
հաշվին, հաշվի յե առնվում յերկու կողմերի հաշվեկշիռների № 204
—«ներկոոպերատիվ հատկացումների» հաշվով։ Ըստ վարչա—կա-
ռավարչան ծախսերի հաշվետվութիւնի մեջ հանրապետական, յերկ-
բային և մարզային միութիւնների նախագահութիւններն ի-
րենց վարչա—կառավարչական ծախսերն այն մասով, վոր հա-
տուցում են մթերման միավորումները, ցույց են տալիս «մթեր-
ման գործունեութիւն» սյունակում։

Յեթե հանրապետական, յերկրային և մարզային միութիւն-
ների անտեսութիւնների մեջ կան արտադրական ձեռնարկներ,
ապա այդ ձեռնարկները հիշյալ միութիւնների նախագահու-
թիւնների վարչա—կառավարչական ծախսերը ծածկելու համար
կատարում են վերջինների կողմից սահմանված չափով հատկա-
ցում։ Ստացված հատկացումները համապատասխան միավորումի
հաշվեկշռում պահանջագրվում է № 182 հաշիվը՝ հոդվածների այն
կարգով, վոր ցույց է տրված շրջապատմութիւնների նկատ-
մամբ։

Հանրապետական և յերկրային միութիւնների՝ իրենց մարզ-
ային միութիւններից (մարզային բաժանումների) ստացած
հատկացումները յերկու կողմերի հաշվեկշիռներում հաշվի յեն
առնվում № 204—«ներկոոպերատիվ հատկացումների» հաշվով։

Հանրապետական, յերկրային և մարզային միութիւնների
նախագահութիւնների ստացած այն հատկացումները, վոր վճա-
րում են իրենց մեծաքանակ պահեստները և իրենց մանրավաճառ
ձեռնարկները, հաշվի յեն առնվում պահեստների ու մանրավա-
ճառ ձեռնարկների հաշվեկշիռներում և նախագահութիւնների
հաշվեկշիռներում, № 204—«ներկոոպերատիվ հատկացումների»
հաշվով («ներտնտեսային հատկացումների» յենթահաշվով)։

Հաշվառման և հաշվետվութիւնի բաժնի վարիչ՝ ՄՈՂԵՆՈՎ.
Կազմակերպ. գրասպայի և հաշվառման մեթոդոլոգիայի

Լենինգրադի տպ. պատ. № 2825 տպագ. Գրքից

ՀԱՅԿ-ՍՍՀ

657
2-25